4415

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«15» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 100 - 25

Նախաձեռնող՝ ***«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Լենինգրադյան փ. 23/07

Գործունեությունը՝ ***Նոր Եդեսիա բնակավայրում Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցում***
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 100 - 25

«15» ապրիլի 2025թ.

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրում Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Նոր Եդեսիա բնակավայր

Ներածական մաս. «ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Նոր Եդեսիա բնակավայրում կառուցել միջնակարգ դպրոց:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 25 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1070 մետր: Համաձայն ինժեներաերկրաբանական եզրակացության ստորգետնյա ջրերը նախատեսվող գործունեության տարածքում մինչև 25 մ խորության վրա բացակայում են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նոր դպրոցը նախատեսվում է կառուցել 288 աշակերտի համար, որը բաղկացած կլինի 4 մասնաշենքերից, որոնք իրարից բաժանված կլինեն սեյսմիկ կարաններով: Նախագծվող դպրոցի տարածքի հեռավորությունը մոտակա բնակելի նշանակության հողամասերից կազմում է մոտ 50 մ, իսկ հասարակական նշանակության շենք շինություններից՝ 200-250 մ:

Նախատեսվող դպրոցի առաջին մասնաշենքը կլինի ուղղանկյունաձև՝ 27.6x20.0 մ առանցքային չափերով, եռահարկ, որտեղ տեղակայված կլինեն տարրական դասարանները, ներառական դասարանը, մարզասրահ, խաղասենյակ, շախմատի դասարան և այլն:

Երկրորդ մասնաշենքի /կենտրոնական/ առաջին հարկում կլինեն մուտքային հարթակ թեքուղիներով, նախասրահ, հանդիսությունների դահլիճ, ճաշասրահ, կենտրոնական աստիճան, տնօրենի աշխատասենյակ, մեկ վերելակ և այլն, իսկ երկրորդ հարկում՝ ուսմասվարների /միջին և տարրական դպրոցների/ աշխատասենյակներ և կաբինետներ: Երրորդ հարկում կլինի գրադարան, կաբինետներ և այլն:

Կիսանկուղային հարկում կլինի ճաշարանի խոհանոցը իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը՝ միջին և ավագ դպրոցն է, որտեղ կլինեն դասասենյակներ, կաբինետներ, սանհանգույցներ և այլն: Մասնաշենքը լինելու է եռահարկ, միայն մեկ հատվածում՝ երկհարկանի: Այստեղ կառուցվելու են քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Դասասենյակների միջին մակերեսը կկազմի 62 քմ:

Նկուղային հարկում նախատեսված են հրաձգարան, սանհանգույցներ և օժանդակ տարածքներ:

Դպրոցի չորրորդ մասնաշենքը /մարզադահլիճ/ կլինի ուղղանկյունաձև՝ 26.0x15.7 մ առանցքային չափերով: Այն կլինի մեկհարկանի՝ մարզական գույքի սենյակով:

Ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերով: Դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար՝ թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն:

Դպրոցի տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել: Նախատեսվում է կառուցել մարզական խաղահարթակ, բաց մարզադաշտ, մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ, իրականացնել պարսպապատում, արտաքին լուսավորություն և այլն: Դպրոցի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով:

Դպրոցի հողամասի տարածքում նախատեսվում են կաթսայատուն, որը նախագծվել է 288 հոգանոց դպրոցի սպասարկման համար և որի մակերեսը կլինի 39.44 քմ և էլ.ենթակայան՝ 31.32 քմ մակերեսով:

Դպրոցի էներգիայի արտադրության, լուսավորության և այլ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսվում է արևային ֆոտովոլտային համակարգ: Նախատեսված է կառուցել 155.4 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայան, բաղկացած 4 սեղաններից, 280 հատ արևային վահանակներից:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջրամատակարարման եվ հրդեհաշիջման ցանցերը նախատեսված են համակցված: Տաք ջրամատակարարումն իրականացվելու է դպրոցի տարածքում նախատեսվող անհատական կաթսայատնից, իսկ սառը ջրի սնուցումը՝ դպրոցի տարածքին մոտ 15 մ հեռավորության վրա անցնող համայնքային ջրմուղի ցանցից:

Ջեռուցման համար նախատեսված են 3 տուրբո կաթսաներ՝ 2-ը 500 Կվտ-ժամ հզորությամբ, իսկ 1-ը՝ 80 Կվտ-ժամ հզորությամբ ջեռուցման համար: Նրանք տեղադրված են լինելու կաթսայատանը:

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կհավաքվեն և կհեռանան ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց, որից հետո կմիանան տարածքում նախատեսվող կեղտաջրերի մաքրման «ՏՈՊԱՍ-150» կայանին: Ցանցերի համար նախատեսված են կոյուղու պլաստմասե խողովակներ և դիտահորեր՝ ստուգումներ կատարելու և հետագա շահագործման համար:

Էլեկտրասնուցման արտաքին ցանցերի միացումները կիրականացվեն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից:

Դպրոցում նախատեսնված է օդի մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման համակարգեր:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- մասնաշենքերի թիվ՝ 4 հատ,
- տարողունակություն՝ 288 տեղ,
- հողամասի մակերես՝ 12520 քմ,
- կառուցապատման մակերես՝ 2685.5 քմ,
- մարզադաշտ՝ 1132 քմ,
- վազքուղի՝ 376.6 քմ,
- մարզահրապարակ՝ 675.6 քմ,
- սալվածք, արտաքին աստիճան, թեքահարթակ՝ 520 քմ,
- հրապարակ, անցուղիներ՝ 1830 քմ,
- գազոն, ծաղկանոց՝ 1001 քմ,
- կանաչապատ տարածք՝ 1386.8 քմ,
- լիցքային գրունտով լանշաֆտի կանաչապատում՝ 2560 քմ,
- տրիբունա՝ 220 քմ,
- սահմանագծով պարիսպ հենապատ՝ 132.5 քմ:

Նախատեսվող գործունեության կառուցապատման ժամանակ կատարվելու են 13240 խմ ծավալի հողային աշխատանքներ, որից հետլիցքը՝ 4790 խմ, մնացած՝ 8450 խմ ծավալի հողային զանգվածը, որը պիտանի չէ՝ տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր և լրացուցիչ բերվելու է 7700 խմ հողային զանգված:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև ազատ տարածքի վրա իրականացնել կանաչապատման աշխատանքներ՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ մասնավորապես տույա՝ 10, եղևնի՝ 8, Այլ տեսակներ՝ 25 և այլն: Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի նոր ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի ընդհանուր ոռոգման համակարգին: Ոռոգումը կիրականացվի կաթիլային և անձրևացման եղանակներով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինհրապարակի ցանկապատում՝ համապատասխան բարձրության ցանցով, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրցանցին և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բացառել շինհրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը,
- բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ իրականացնել բետոնախառնիչներով՝ մոտակա բետոնաշաղախային հանգույցներից կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվող գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինաղբի տեղափոխությունն իրականացնել Աշտարակի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի թրթռումների մակարդակների գործիքային չափումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, գործադրվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՂԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի փոշի, CO, NO) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի իրականացում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով և այլն:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, Աշտարակի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աշտարակի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝

Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրում Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան